

# Ք Վ Ե Ա Ր Կ ՈՒ Թ Յ Ա Ն Կ Ա Ր Գ Ը

## Հարգելի ընտրող

2020 թվականի ապրիլի 14-ը Արցախի Հանրապետության նախագահի երկրորդ փուլի ընտրությունների օրն է:

Ընտրական տեղամասերն այդ օրը՝ առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան ժամը 20-ը պատրաստ են օգնելու Ձեզ իրականացնելու Ձեր ընտրական իրավունքը:

• Ներկայանալով քվեարկության սենյակ, Դուք պետք է ներկայացնեք անձը հաստատող փաստաթուղթ: Դրանք են՝ անձնագիրը կամ նույնականացման քարտը, կամ անձնագրին ու նույնականացման քարտին փոխարինող ժամանակավոր փաստաթուղթը՝ տրված ԱՀ ոստիկանության կողմից, իսկ եթե զինձառայող եք՝ զինվորական վկայականը կամ զինվորական գրքույկը:

• Ընտրողների գրանցման համար պատասխանատու հանձնաժողովի անդամը ստուգում է Ձեր անձը հաստատող փաստաթուղթը, ընտրություններին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակում գտնում է Ձեր ազգանունը, անունը և հերթական համարը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները լրացնում է ցուցակում, և Դուք ստորագրում եք քվեարկության համար նախատեսված առանձին սյունակում: Հանձնաժողովի անդամը ստորագրում է այդ տվյալների դիմաց նախատեսված սյունակում:

• Գրանցվելուց անմիջապես հետո մոտենում եք քվեաթերթիկների տրամադրման համար պատասխանատու հանձնաժողովի անդամին, նրանից ստանում եք մեկ սպիտակ քվեաթերթիկ՝ Հանրապետության նախագահի ընտրությունների քվեարկությանը մասնակցելու համար:

• Մոտենում եք քվեաթերթիկներ կնքող հանձնաժողովի անդամին, ով համոզվելով Ձեր՝ տվյալ ընտրական տեղամասում հաշվառված լինելու մեջ, կնքում է քվեաթերթիկը:

• Դուք անցնում եք քվեախցիկ՝ քվեարկելու **գաղտնի** և քվեաթերթիկի վրա տեղադրված դատարկ քառանկյուններից որևէ մեկում ✓ (վեաձև) կամ դրան նմանվող նշանով կատարում եք նշում այն թեկնածուի անվան դիմացի քառանկյունում, ում կողմ եք քվեարկում:

Հանձնաժողովն ապահովում է քվեարկության գաղտնիությունը և թե ինչպես քվեարկեցիք, գիտեք միայն Դուք:

• Եթե չեք կարող ինքնուրույն լրացնել քվեաթերթիկը, ապա հանձնաժողովի նախագահին տեղեկացնելուց հետո իրավունք ունեք քվեարկության խցիկ հրավիրելու այլ անձի, ով չպետք է լինի ընտրական հանձնաժողովի անդամ, վստահված անձ, դիտորդ, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչ:

• Եթե կարծում եք, որ քվեաթերթիկը սխալ եք լրացրել, ապա կարող եք դիմել հանձնաժողովի նախագահին՝ նոր քվեաթերթիկ ստանալու և քվեարկելու համար:

• Քվեաթերթիկում քվեարկության մասին նշում կատարելուց հետո Դուք քվեարկության խցիկում, **ուշադրություն՝ քվեարկության խցիկում**, ծալում եք քվեաթերթիկը և մոտենում քվեատուփին:

• Քվեատուփի համար պատասխանատու հանձնաժողովի անդամը բացում է քվեատուփի ձեղքը և Ձեզ հնարավորություն ընձեռում քվեաթերթիկը գցելու քվեատուփի մեջ:

• Քվեաթերթիկը քվեատուփի մեջ գցելուց հետո, Դուք պետք է անմիջապես հեռանաք ընտրական տեղամասից:

• **Հիշեք՝** լիազորված քվեարկությունն արգելվում է:

**ԱՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով**